ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի № ----Ա

«ՏԵՄԱՖՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ «Տեմաֆոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2022 թվականի նոյեմբերի 16-ի №444-Ա որոշմամբ, որն անբողոքարկելի է դարձել 2023 թվականի փետրվարի 23-ին, Ընկերությանը նախազգուշացրել է և պարտավորեցրել որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը,

բ) Որոշման համաձայն՝ Ընկերությունը մինչև 2023 թվականի հունվարի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, ինչպես նաև Որոշման համաձայն՝ Ընկերությունը մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով հաստատված ձևերին համապատասխան 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները, սակայն չի ներկայացրել,

գ) Որոշմամբ սահմանված պահանջների չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 13-ին և օգոստոսի 8-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթներ, որոնց վերաբերյալ վերջինս

ծանուցվել է համապատասխանաբար՝ Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 13-ի №ԳԲ/34.2-Մ2-7/2339-2023 և օգոստոսի 8-ի №ԳԲ/34.2-Մ2-7/2802-2023 գրություններով,

դ) Ընկերության նկատմամբ 2023 թվականի հուլիսի 13-ին և օգոստոսի 8-ին հարուցված վարույթների համատեղ իրականացումը կարող է ապահովել ավելի արագ և արդյունավետ լուծում, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթները միացվել են,

ե) Ընկերությունը վարչական վարույթների շրջանակում քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

զ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միևնույն անձի մասնակցությամբ վարույթների միացման դեպքում տուգանք կիրառելիս կիրառվում է կարգավորվող անձի թույլ տված խախտումների համար նախատեսված տուգանքներից առավել խիստ տուգանքի առավելագույն չափը, և այն պարագայում, երբ նույն մասով նախատեսված պատասխանատվության կիրառումն առավել անբարենպաստ է խախտում կատարած անձի համար, քան եթե այն կլիներ վարույթների առանձին իրականացման պարագայում, Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի №ԳԲ/34.2-Մ2-9/4096-2023 գրությամբ միացված վարույթներն առանձնացվել են,

է) իրականացված վարչական վարույթների շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջները,

ը) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ընկերության կողմից, Հանձնաժողովի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման կամ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարմանը, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 35-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը.
   2) մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով ամրագրված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2023թ.